ՎԻԿՏՈՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԱՎԱՆԴԱԿԱՆԸ

21-ՐԴ ԱՆԳԱՄ ՀՈՎՍԵՓՅԱՆԱԿԱՆ ՊՈԵԶԻԱՅԻ ՕՐԸ ՀԵՇՏԻԱՅՈՒՄ



Սեպտեմբերի 29-ին, արդեն 21-րդ անգամ, Նինոծմինդայի մունիցիպալիտետի Հեշտիա գյուղում նշվեց հայտնի բանաստեղծ, մանկավարժ, հասարակական գործիչ Վիկտոր Հովսեփյանին (1947-1996թթ.) նվիրված պոեզիայի օրը, որն արդեն ավանդույթի է վերածվել:

Գեղեցիկ այս առիթը Հեշտիա է բերում շրջանի ղեկավարներին, բանաստեղծի ընկերներին, բարեկամներին, բազմաթիվ հյուրերի՝ Թբիլիսիից, Երեւանից: Ավանդական օրակարգով գյուղի Սուրբ Աստվածածին եկեղեցում միասնական աղոթք բարձրացվեց՝ առաջնորդությամբ Հեշտիայի կաթողիկե հոգեւոր հովիվ Արժանապատիվ Տեր Անտոն քահանա Անտոնյանի եւ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Վիրահայոց թեմի Արժանապատիվ քահանա հայրեր Տեր Տաթեւ Մարուքյանի եւ Տեր Արմաշ Պողոսյանի:

Այդ օրը տոնի մասնակիցները, ըստ ավանդույթի, այցելեցին բանաստեղծի տուն-թանգարան, որտեղ հյուրերին դիմավորեցին բանաստեղծի կինը՝ Թերեզան, որդին՝ Գերմանիայի Մյունխեն քաղաքի նեյրովիրաբուժական եւ կենսաբանական հետազոտությունների համալսարանի պրոֆեսոր Սահակ Հովսեփյանը: Բանաստեղծի դուստրը՝ Գիսանեն, պատմեց Վիկտոր Հովսեփյան բանաստեղծի գրական ժառանգության, անտիպ գործերի տպագրման աշխատանքների մասին: Հայտնեց, որ նոյեմբերին լույս կտեսնի բանաստեղծի «Նանե', նանե', կրակ տուր ինձ» մանկական ժողովածուն:

Թանգարանից հետո՝ ներկաներն այցելեցին Հովսեփյանների տոհմական եռակնյայի Սուրբ Գեւորգ սրբավայր, ծաղիկներ խոնարհեցին իր նախնիների կողքին հանգչող Վիկտոր Հովսեփյանի շիրմին:

Գյուղի՝ Վիկտոր Հովսեփյանի անվան թիվ 1 հանրային դպրոցում բանաստեղծի կրտսեր դուստրը՝ Նանե Հովսեփյանը եւ դպրոցի տնօրեն Բեռնիկ Հովսեփյանը ներկայացրեցին Վիկտոր Հովսեփյանին նվիրված անկյունը:

Կեսօրին արդեն մարդաշատ էր Հեշտիայի ակումբը: Օրվա առիթով Հեշտիայում էին Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Հենզել Մկոյանը, Նինոծմինդայի քաղաքապետ Անի Մոսոյանը, սակրեբուլոյի նախագահ Սմբատ Կյուրեղյանը, Նինոծմինդայի եւ Ախալքալաքիի մունիցիպալիտետների վարչության, կրթական, մշակութային, հասարակական կառույցների աշխատակիցներ, հյուրեր՝ Թբիլիսիից, Երեւանից:

Ելույթ ունեցան Վրաստանի հայ գրողների միության «Վերնատուն» միության նախագահ, բանաստեղծ Ժորա Սնխչյանը, բանաստեղծ-թարգմանիչ Գիվի Շահնազարը, երեւանցի գրականագետ, բանասիրական գիտությունների թեկնածու Նորայր Ղազարյանը, Արարատի մարզի Զորակ գյուղի Մոնթե Մելքոնյանի անվան դպրոցի տնօրեն Տիգրան Բաբախանյանը, ուրիշներ: Ընթերցվեց Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի օրհնության խոսքը: Համերգային ծրագրով հանդես եկան Նինոծմինդայի մշակույթի տան երգի եւ պարի, Հեշտիայի պարի համույթները: Իր անզուգական նվերը՝ հայ երգարվեստի գոհարներ, ներկաներին մատուցեց հեշտիացի տաղանդավոր երգիչ Արմեն Մկոյանը:

ՍԵՂԱ ԱԲՈՎՅԱՆ

ՀՐԱԺԵՇՏ

ԱՇԽԱՐՀԸ ՀՐԱԺԵՇՏ ՏՎԵՑ ՇԱՌԼ ԱԶՆԱՎՈՒՐԻՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Արարողությանը ներկա էին Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը, Ֆրանսիայի նախկին նախագահներ, բարձրաստիճան պաշտոնյաներ, հասարակական, քաղաքական, մշակութային անվանի գործիչներ, ֆրանսահայ համայնքի ներկայացուցիչներ:

Փարիզի Սուրբ Հովհաննես Մկրտիչ առաջնորդանիստ տաճարում Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանը, վարչապետ Նիկոլ Փաշինյանը ներկա են գտնվել Շառլ Ազնավուրի հոգեհանգստի կարգին, որը մատուցվել է Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք Ամենայն Հայոց կաթողիկոսի կողմից:

Իր կամքի համաձայն, Շառլ Ազնավուրին հուղարկավորեցին Փարիզից ոչ հեռու գտնվող Մոնֆոր Լ'Ամորի ավանի միջնադարյան վանքի բակում, որի տարածքում գտնվում է նրա ընտանեկան դամբարանը, ուր հուղարկավորված են Ազնավուրի ծնողներն ու որդին:

ԱՎԱՆԴԱԿԱՆ

ՄԱՅՐԱՔԱՂԱՔԸ ՏՈՆԵՑ ԻՐ ՕՐԸ՝ «ԹԲԻԼԻՍՈԲԱՆ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Այդ տարածքներում անցկացվեցին սպորտային, ժամանցային, մանկական, իսկ երեկոյան ժամերին Եվրոպայի հրապարակում անցկացվեցին համերգներ: Մասնավորապես, Ռիղեի այգի եկած հյուրերին դարձան «Գարդենիա Շեւարդնաձեի» շատ գեղեցիկ եւ մասշտաբային ինստալացիայի ականատեսները, կազմակերպված էին մանկական տարածքներ, ներկայացվեցին անիմատորներ: Իսկ 50 ձեռնարկատերեր ներկայացրին իրենց արտադրանքը: Իրենց խոհարարական վարպետությունը ցանկացողները ներկայացրին խոհարարարական փառատոնին:

Ավանդույթի համաձայն, կայացավ Թբիլիսիի պատվավոր քաղաքացիների կոչման շնորհման արարողությունը: «Թբիլիսոբա 2018»-ին Թբիլիսիի պատվավոր քաղաքացու կոչմանն արժանացավ 15 տարբեր ոլորտում գործող անձ՝ բանասեր եւ ռեժիսոր Լանա Ղողոբերիձեն, տիեզերական օբյեկտների կոնստրուկտոր էլգուջա Մեծմարիաշվիլին, ջազ կատարող Գիուլի Չոխելին, պարող եւ պարուսույց Թենգիզ Ութմելիձեն, ավտոինժեներ Գայոզ Կանդելակին, ճարտարապետության հետազոտող Մայա Մանիան, ուռուցքաբան Կոնստանտինե Մարդալեիշվիլին, գինեկոլոգ Նոդար Ցերցվաձեն, բժիշկ Վլադիմեր Կախաձեն, բանաստեղծ Թեմուր Չալաբաշվիլին, Վրաստանում Իսրայելի արտակարգ եւ լիազոր դեսպան Շաբթայ Ցուրին, երաժիշտ Քեթի Մելուան, պարող եւ բալետի վարպետ Միխեիլ Բարիշնիկովը, դիրիժոր Վախթանգ Կախիձեն, կոմպոզիտոր եւ դաշնակահար Նիկոլոզ Ռաճվելին:

Ինչպես տոնական արարողության ժամանակ նշեց Կախա Կալաձեն՝ պատվավոր թբիլիսցու կոչում են ստանում այն մարդիկ, ովքեր մայրաքաղաքի եւ Վրաստանի համար հատուկ դեր են խաղում:

ՃԱՆԱՉԵՆՔ ՄԵՐ ԵՐԿԻՐԸ

ԻՆՉ ԳԵՂԵՑԻԿ ԵՍ, ՍԻՐԵԼԻ ԹԲԻԼԻՍԻ...

Մեր դպրոցի համար էքսկուրսիաները դարձել են ուսումնական գործընթացի բաղկացուցիչ մասը, որը ունի ոչ միայն ուսուցուղական, այլ նաեւ դաստիարակչական մեծ նշանակություն սովորողների համար:

Դամալայի հանրային դպրոցի 7-րդ դասարանի աշակերտները, իրենց դասղեկ՝ Անի Հարությունյանի, ուսուցիչների եւ ծնողների ուղեկցությամբ, ուղեւորվեցին դեպի Թբիլիսի՝ ճանաչելու Վրաստանի մայրաքաղաքի գեղատեսիլ վայրերը եւ ծանոթանալու հայ պատմա-մշակութային ճարտարապետական կառույցներին: Ճանապարհը նրանք անցան ծափ ու ծիծաղով, երգ ու տաղով, իսկ այդ ամենին հաջորդեց արեւածագը:

Եվ սկսվեց ճանաչողական էքսկուրսիան: Մենք եղանք Թբիլիսիի մի քանի տեսարժան վայրերում: «Հավլաբար» թաղամասում այցելեցինք «Սուրբ էջմիածին» եկեղեցին: Տեղեկացանք, որ այդ եկեղեցին միակն է, որ Մայր Աթոռից դուրս կոչվում է «Սուրբ էջմիածին»: Այստեղից մենք բարձրացանք դեպի «Էլիա» թաղամաս, Հայ գրողների եւ հասարակական գործիչների Թբիլիսիի Խոջիվանքի պանթեոն, որտեղ հանգչում են Ռաֆֆին, Հ.Թումանյանը, Նար-Դոսը, Գր.Արծրունին, Մուրացանը, աշուղ Ջիվանին, Ղ.Աղայանը, Գ.Սունդուկյանը, Ալ.Ծատուրյանը եւ ուրիշ նշանավոր արվեստագետներ եւ հասարակական գործիչներ: Թարմ օդը եւ Մեծն մեծերի շիրիմները ոգեւորել էին ուսուցիչներին ու աշակերտներին, եւ նրանք արտասանում էին Ամենայն Հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանի բանաստեղծությունները, երգում՝ Ջիվանու երգերը: Այնուհետեւ եղանք «Սուրբ Գեւորգ» եկեղեցում, որի գավթում գտնվում է Սայաթ-Նովայի գերեզմանը: Առջեւում սպասվում էր մեծ անակնկալ. իր դռներն էր բացել Թբիլիսիի Ա.Գրիբոյեդովի անվան ռուսական դրամատիկական թատրոնը, ուր ժամանակավոր ապաստան է գտել Վրաստանում գտնվող միակ՝ Պ.Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնը, որը այդ օրը բեմականացնելու էր Հովհաննես Թումանյանի «Գիքորը»:

Աշակերտները մեծ խանդավառությամբ էին դիտում ներկայացումը, իրար էր խառնվել հուզմունքն ու ծիծաղը... Ներկայացումը հագեցած էր դրամատիկ տեսարաններով ու գործողություններով: Աշակերտների համար էքսկուրսիայի ամեն մի րոպեն ուներ իր հետաքրքրությունը: Նրանք վերադարձան տուն՝ իրենց հետ բերելով գեղեցիկ հուշեր եւ անմոռանալի պահեր:

ՆԻՆԱ ՍԻՐԱԿԱՆՅԱՆ

Դամալայի հանրային դպրոցի հայոց լեզվի եւ գրականության ուսուցչուհի

ცესკო
საქართველოს საარჩევნო ადმინისტრაცია

2018 թվականի հոկտեմբերի 28-ին կանցկացվեն Վրաստանի նախագահի ընտրություններ

Հոկտեմբերի 28-ին ընտրողները ուղղակի և համընդհանուր ընտրությունների հիման վրա Վրաստանի նախագահ կընտրեն վերջին անգամ, 6 տարի ժամկետով:

Վրաստանի նախագահի 2018 թվականի հոկտեմբերի 28-ի ընտրություններին Վրաստանի յուրաքանչյուր քաղաքացի իրավունք ունի մասնակցելու 18 տարեկան հասակից: Վրաստանի կենտրոնական ընտրական հանձնաժողովի համար (ԿԸՀ) կարևոր է ընտրությունների անցկացումը ժողովրդավարական և բոլորի համար հասանելի միջավայրում, ինչը նկատի ունի բոլոր քաղաքացիների, այդ թվում Վրաստանի տարածքում հոծ բնակեցված ազգային փոքրամասնությունների, իրազեկմանն ու ընտրական գործընթացների մեջ ներգրավմանն աջակցումը: ԿԸՀ-ն ապահովում է ընտրողների հավասար մասնակցություն ընտրություններին:

Ազգային փոքրամասնությունների ընտրողների իրազեկումը

Ազգային փոքրամասնությունների ընտրողների իրազեկման նպատակով ընտրական վարչակազմն ապահովում է. ազգային փոքրամասնությունների համար հատկացված ծառայությունների մասին տեսահոլովակի պատրաստում, հեռախոսային/ տեղեկատվական կենտրոնի միջոցով ընտրական հարցերի վերաբերյալ տեղեկատվության տրամադրում հայերեն և ադրբեջաներեն լեզուներով, ԿԸՀ-ի կողմից պատրաստված բոլոր տեսահոլովակների հայերեն և ադրբեջաներեն լեզուներով լուսաբանում տարածաշրջանային հեռուստատեսությունների եթերում:

Ազգային փոքրամասնություններով հոծ բնակեցված տարածաշրջաններում ապրող ընտրողները կարող են ԿԸՀ-ի կայքում ընտրողների միասնական ցուցակում իրենց տվյալները վերստուգել վրացերեն-հայերեն և վրացերեն-ադրբեջաներեն լեզուներով:

Ընտրողների, այդ թվում ազգային փոքրամասնություններով հոծ բնակեցված տարածաշրջաններում ապրող բնակչության հետ արդյունավետ հաղորդակցության հաստատման նպատակով ԿԸՀ-ը վարում է տեղեկատվական արշավ՝ «Խոսում ենք ընտրողների հետ»: Արշավի շրջանակներում ընտրական վարչակազմի ներկայացուցիչները հասարակական հավաքների վայրերում քաղաքացիներին տեղեկատվություն են տրամադրում իրենց ընտրական իրավունքների, ընտրական գործընթացների, ընտրությունների պատմության և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների գործառույթների/ պարտականությունների մասին: Նրանց փոխանցվում են նաև տեղեկատվական քարտեր 2018 թվականի նախագահական ընտրությունների և ընտրական վարչակազմի գործունեության մասին: Տեղեկատվական քարտը (ֆլայեր) թարգմանվել է ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների համար և տպագրվել հայերեն և ադրբեջաներեն լեզուներով:

Ազգային փոքրամասնություններով հոծ բնակեցված տարածաշրջաններում ապրող ընտրողների համար քվեարկության օրը հասանելի կլինի. ընտրական քվեաթերթիկը վրացերեն-հայերեն, վրացերեն-ադրբեջաներեն, իսկ խառը ընտրատեղամասերում (4 ընտրատեղամաս)՝ վրացերեն-հայերեն-ադրբեջաներեն, ընտրողների միասնական ցուցակը՝ վրացերեն-հայերեն և վրացերեն-ադրբեջաներեն լեզուներով, քվեաթերթիկը լրացնելու կարգը՝ վրացերեն-հայերեն և վրացերեն-ադրբեջաներեն լեզուներով:

Ընտրությունների հետ կապված տեղեկությունների համար դիմե՛ք ԿԸՀ-ի հեռախոսային / տեղեկատվական կենտրոն, 2 51 00 51 հեռախոսահամարին, Ձեզ ծառայություն կմատուցեն հայախոս և ադրբեջանախոս օպերատորներ:

 # Աշխատում ենք Ձեզ համար

WWW.CESKO.GE

+995 32 2 51 00 51

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ. «ԸՍՏ ԷՈՒԹՅԱՆ, ՄԻՆՉԵՎ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 16-Ը ՀՐԱԺԱՐԱԿԱՆ ԵՄ ՏԱԼՈՒ, ԲԱՅՑ...»

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանն առաջիկա օրերին կներկայացնի իր հրաժարականը՝ դեկտեմբերին կայանալիք արտահերթ խորհրդարանական ընտրությունների համար:

Այս մասին Նիկոլ Փաշինյանը հայտնեց «Ֆրանս 24» հեռուստաընկերությանը:

«Ըստ էության, ընտրությունները, նախնական կարող եմ ասել, որ մոտավորապես դեկտեմբերի 9-10-ին, այդ հատվածում, պլյուս-մինուս մի քանի օր, այդ հատվածում, տեղի կունենան, եւ սրա համար, ըստ էության, ես պետք է հրաժարական տամ՝ մինչեւ հոկտեմբերի 16-ն ընկած ժամանակահատվածը, բայց...»,- ասաց Նիկոլ Փաշինյանը եւ հավելեց՝ «...Կմնամ մինչեւ խորհրդարանական ընտրությունների ավարտը որպես վարչապետի ժամանակավոր պաշտոնակատար»:

ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՀԱՐՑԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԵՎ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՀԱՆԴԻՊՄԱՆ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

- Իսկապես շատ կարեւոր է, որ այս իրավիճակը քննարկենք նաեւ Հանրապետության նախագահի հետ: Ըստ էության, հիմա կարող եմ ասել, որ վերջին օրերին մի քանի իրադարձություններ են տեղի ունենում, որոնք կարծես թե տանում են դեպի հանգուցալուծում: Մասնավորապես, «Բարգավաճ Հայաստան» կուսակցության նախագահ Գագիկ Ծառուկյանի հետ հուշագիր ստորագրեցինք՝ դեկտեմբերին խորհրդարանական արտահերթ ընտրություններ անցկացնելու վերաբերյալ, եւ եւս 16 պատգամավոր գրավոր հայտարարությամբ պաշտպանել են այդ նախաձեռնությունը: Կարծում եմ, որ, ըստ էության, պրոցեսը գնում է լարվածությունը թոթափելու ճանապարհով, ինչը դրական է,- նշեց Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյան:

- Ես նույնպես շատ ուրախ եմ, որ սկզբունքորեն, ինչպես նախկինում նշել էի, պրոցեսը տեղի ունենա երկխոսության եւ հանդուրժողականության մթնոլորտում: Ուրախ եմ լսել, որ, վերջին 1-2 օրվա ընթացքում, բանակցություններին, երկխոսության ճանապարհով որոշակի արդյունքներ են ձեռք բերվել, եւ՝ որ, հավանաբար, հանգուցալուծումը հեռու չէ: Շատ կարեւոր է, որ այդ հանգուցալուծումը տեղի ունենա,- փաստեց Արմեն Սարգսյանը:

ՀՈՒՇԱԳԻՐ՝ ԱՐՏԱՀԵՐԹ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՐՑՈՎ

Հոկտեմբերի 8-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը հանդիպում ունեցավ «Բարգավաճ Հայաստան» կուսակցության նախագահ Գագիկ Ծառուկյանի հետ:

Հանդիպմանը քննարկվեցին հայաստանյան ներքաղաքական զարգացումներին, այդ թվում՝ խորհրդարանական արտահերթ ընտրությունների անցկացմանն առնչվող հարցեր:

Հանդիպմանը Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը եւ «Բարգավաճ Հայաստան» կուսակցության նախագահ Գագիկ Ծառուկյանը՝ դեկտեմբերին Հայաստանում արտահերթ խորհրդարանական ընտրություններ անցկացնելու վերաբերյալ, հուշագիր են ստորագրել: Ինչպես «Ֆեյսբուք»-ի իր էջում գրել է Նիկոլ Փաշինյանը, ըստ հուշագրի կողմերը համակարծիք են 2018 թվականի դեկտեմբեր ամսվա ընթացքում Հայաստանի Հանրապետության՝ արտահերթ խորհրդարանական ընտրություններ անցկացնելու վերաբերյալ: Նաեւ՝ արտահերթ խորհրդարանական ընտրությունների կազմակերպմանը եւ ԱԺ արձակմանը հասնելու նպատակով՝ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի հրաժարականի դեպքում, «Ծառուկյան դաշինք» խմբակցությունը, որպես հեղափոխության աջակից ուժ, պարտավորվում է ՀՀ վարչապետի թեկնածու չառաջադրել, չաջակցել վարչապետի որեւէ թեկնածուի: Ինչպես նաեւ՝ խմբակցության պատգամավորները չեն մասնակցի ԱԺ պատգամավորների 1/3-ի կողմից ՀՀ վարչապետի թեկնածու առաջադրելու որեւէ նախաձեռնության:

Հուշագրում ներկայացված են նաեւ կողմերի մյուս պարտավորություններն ու իրավունքները:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵՑ ՖՐԱՆԿՈՖՈՆԻԱՅԻ 17-ՐԴ ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎԸ

Հոկտեմբերի 11-12-ը Հայաստանում անցկացվեց Ֆրանկոֆոնիայի 17-րդ գագաթաժողովը:

Աշխարհի ավելի քան 40 երկրների ներկայացուցիչների մասնակցությամբ, գագաթաժողովը մեկնարկեց՝ Երեւանում հոկտեմբերի 7-ին անցկացված Ֆրանկոֆոնիայի Մշտական խորհրդի 105-րդ նիստով, որին մասնակցում էին կազմակերպության լիիրավ, ասոցիացված եւ դիտորդի կարգավիճակ ունեցող պետությունների եւ կառավարությունների, Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության գործընկեր կառույցների շուրջ հարյուր բարձրաստիճան պատվիրակություններ: Դրան հաջորդեց նախարարական համաժողովի նիստը, ապա՝ Երեւանի Ազատության հրապարակում Ֆրանկոֆոնիայի ավանի պաշտոնական բացումը:

Գագաթաժողովի շրջանակներում, հոկտեմբերի 9-12-ին, Ծաղկաձորում անցկացվեց Ֆրանկոֆոն մամուլի միջազգային միության (ՖՄՄ) 47-րդ նստաշրջանը:

Ֆրանկոֆոնիայի 17-րդ գագաթաժողովի շրջանակներում, առաջին անգամ հոկտեմբերի 10-ին, «Թումո» ստեղծարար տեխնոլոգիա. կազմակերպվեց տնտեսական ֆորում՝ ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանի բարձր հովանու ներքո: Իսկ հոկտեմբերի 11-ին, Երեւանի Հանրապետության հրապարակում անցկացվեց գալա համերգ, որի եզրափակիչ հատվածը նվիրված էր աշխարհահռչակ շանսոնյե Շառլ Ազնավուրին:

Իսկ ինչ վերաբերում է անմիջականորեն Ֆրանկոֆոնիայի 17-րդ գագաթաժողովին, ապա այն անցկացվեց հոկտեմբերի 11-12-ը:

Նշենք, որ գագաթաժողովին Վրաստանը ներկայացնում էր արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանին:

ՀՈԲԵԼՅԱՆ. ՀԱՅ ԱՎԵՏԱՐԱՆՉԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ 100-ԱՄՅԱԿԸ ՆՇՎԵՑ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Երեւանի Ալ.Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ակադեմիական թատրոնում տեղի ունեցան «Հավատի, սիրո եւ ծառայության ժառանգություն» վերտառությամբ միջոցառումներ՝ նվիրված Ամերիկայի Հայ Ավետարանական ընկերակցության (ԱՀԱԸ) կազմավորման 100-ամյակին:

Միջոցառումներին իրենց մասնակցությունն էին բերել աշխարհի 24 երկրների Հայ Ավետարանական եկեղեցու (ԱՄՆ, Կանադա, Լիբանան, Սիրիա, Արցախ եւ այլն) ներկայացուցիչներ, այդ թվում՝ նաեւ Թբիլիսիի եւ Ախալքալաքիի Հայ Ավետարանական եկեղեցիների հոգեւոր հովիվներ վերապատվելի Կարեն Խաչատուրյանը եւ վերապատվելի Վալերի Զաքարյանը:

Միջոցառումն անցավ ջերմության եւ երախտագիտության մթնոլորտում:

Հոբելյանական միջոցառմանը ողջույնի խոսքով հանդես եկան ԱՀԱԸ-ի գործադիր տնօրեն Զավեն Խանջյանը, Եվրասիայի Հայ Ավետարանական ընկերակցության միության նախագահ Ռընե Լեւոնյանը, ՀՀ մշակույթի նախարար Լիլիթ Մակունցը եւ ուրիշներ:

Ընթերցվեցին Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանի, Արցախի նախագահ Բակո Սահակյանի, Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդի եւ ՀՀ սփյուռքի նախագահ Մխիթար Հայրապետյանի շնորհավորական ուղերձները:

Ասենք, որ ԱՀԱԸ-ն հիմնադրվել է 1918թ. հունիսի 7-ին, ԱՄՆ -ի Մասաչուսեթս նահանգի Ուստր քաղաքում:

ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

ՆՈՐԸՆՏԻՐ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐԳՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 13-ԻՆ

Երեւանի նորընտիր քաղաքապետ Հայկ Մարությանի երդմնակալության արարողությունը տեղի կունենա հոկտեմբերի 13-ին, Երեւանի քաղաքապետարանում հրավիրված Երեւանի ավագանու նիստում:

Ավագանու առաջին նիստի ժամանակ յեւավորվեց հաշվիչ հանձնաժողովի կազմը: Նշենք, որ Հայաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովը՝ սեպտեմբերի 30-ին կայացած արտահերթ նիստում, ամփոփել է Երեւանի ավագանու 2018 թվականի սեպտեմբերի 23-ի արտահերթ ընտրությունների արդյունքները, ըստ որի «Իմ քայլը» կուսակցությունների դաշինքը տնօրինում է 57 մանդատ, «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը՝ 5 մանդատ, իսկ «Լույս» կուսակցությունների դաշինքը՝ 3 մանդատ:

ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ՄԱԿԱՐԴԱԿԸ ԲԱՐՁՐԱՑԵԼ Է

Նախորդ տարվա հոկտեմբերի 9-ի համեմատ՝ այս տարվա նույն օրը Սեւանա լճի մակարդակը բարձր է 1 սանտիմետրով: Ինչպես տեղեկացրին ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության «Հայհիդրոմետ» ծառայությունից, 2018 թվականի հոկտեմբերի 9-ի դրությամբ՝ Սեւանա լիճը ծովի մակարդակից գտնվել է 1900 մետր 53 սանտիմետր բարձրության վրա՝ նախորդ տարվա հոկտեմբերի 9-ին գրանցված 1900 մետր 52 սանտիմետր նիշի դիմաց:

Արփա-Սեւան թունելային ջրատարից, այս տարվա ընթացքում, Սեւանա լիճ է բաց թողնվել 195 միլիոն 749 հազար խորանարդ մետր ջուր: 20 միլիոն խորանարդ մետր ջուր էլ Սեւան է լցվել սպորերկրյա հոսքի միջոցով: Փոխարենը՝ Սեւանա լճից ոռոգման նպատակներով բաց է թողնվել 195 միլիոն 757 հազար խորանարդ մետր ջուր:

ԱՄՆ ԱՎԵԼԱՑՆՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՇԱՎԱԼՆԵՐԸ

Հոկտեմբերի 9-ին, ՀՀ-ում ԱՄՆ դեսպան Ռիչարդ Միլսը հայտարարեց Հայաստանին ուղղվող ԱՄՆ աջակցության ծավալների ավելացման մասին:

Ինչպես տեղեկացրին Հայաստանում ԱՄՆ դեսպան, քաղաքական անցման հետ կապված հայաստանյան նախաձեռնություններին աջակցելու նպատակով, 14 միլիոն ԱՄՆ դոլարի հավելյալ արտաքին աջակցության միջոցներ է տրամադրել Հայաստանին, իսկ առաջիկա տարվա ընթացքում՝ Միացյալ Նահանգները մտադիր է տրամադրել ավելի քան 26 միլիոն ԱՄՆ դոլար՝ 2018 ֆինանսաբյուջետային տարվա արտաքին աջակցության միջոցներից, որը 20 միլիոն դոլարով ավելի է հայտով Հայաստանի համար սկզբնապես պահանջված ֆինանսավորումից:

ԵՏԱՊ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐ ՉԻՆԱՍՏԱՆԻՑ

Հայաստանի Առողջապահության նախարարությանը՝ կառավարության պահուստային ֆոնդից հատկացվեց 3,22 մլն դրամ առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոնի» կողմից, Չինաստանի կողմից՝ կառավարությանն անհատույց տրամադրված շտապ օգնության ռեանիմոբիլների, շտապ օգնության գծային մեքենաների, դրանց օժանդակ սարքավորումների եւ պահեստամասերի ընդունման, տեղափոխման ու բաշխման հետ կապված ծախսերը փոխհատուցելու նպատակով:

Նշենք, որ չինական կողմը Հայաստանին անհատույց հիմունքներով նախատեսում է տրամադրել 200 շտապ բժշկական օգնության ավտոմեքենա:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՀՈԿՏԵՄԲԵՐ

15.10.2018. Աղվանքի Սուրբ Գրիգորիս կաթողիկոսի նշխարների գտնվելու, Թաքուլ եւ Վարոս, Թումաս, Անտոն, Կրոնիդես սուրբ հայրերի եւ յոթ խոտաճարակների հիշատակության օր

20.10.2018. Սուրբ Մատթեոս, Մարկոս, Ղուկաս եւ Հովհաննես Ավետարանիչների հիշատակի տոն

16.10.2018. Սուրբ առաքյալներ Անանիայի, Մատաթիայի, Բառնաբասի, Փիլիպպոսի, Հովհաննեսի եւ Շիղայի՝ Սիղվանոսի հիշատակության օր

ՆՈՐՈՒՅԹ

ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՓՈԽՎՈՒՄ Է ՎՐԱՅԱԿԱՆՈՎ

Հոկտեմբերի 11-ից գործարկվել է արտասահմանյան վարորդական իրավունքը վրացականով փոխելու նոր կարգը:

Ինչպես տեղեկացրել էՎրաստանի ներքին գործերի նախարարությունը, նոր կանոնակարգի համաձայն, արտասահմանում ստացած վարորդական վկայանը Վրաստանում փոխելու համար անհրաժեշտ է, որպեսզի քաղաքացին վարորդական վկայանը վերցնելու օրից ապրած լինի վկայականը տրամադրող երկրում առնվազն 185 օր, մեկ տարվա ընթացքում:

Վրաստանի քաղաքացին, որը ունի օտար երկրի կողմից տրված վարորդական վկայական, Վրաստանի ներքին գործերի նախարարության ծառայության գործակալությունում վարորդական իրավունքի փաստաթուղթը փոխելու համար պետք է ներկայացնի հետեւյալ փաստաթղթերը.

✓ Դիմում
✓ Վրաստանի քաղաքացու անձը հաստատող վկայական
✓ Օտար երկրի կողմից տրամադրված վարորդական վկայական
✓ Օրենսդրությամբ սահմանված կարգով օրինականացված վարորդական իրավունքի հաստատում
✓ Առողջական վիճակի մասին տեղեկանք
✓ Վարորդական իրավունք տրամադրող երկրի համապատասխան գերատեսչության կողմից սահմանը հատելու մասին տրված տեղեկանք:

ԱՎԱՆԴՈՒՅԹ

ԹԲԻԼԻՍԻՈՒՄ ՆՇՎՈՒՄ Է ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՏՈՆԸ

Այսօր՝ հոկտեմբերի 13-ին, տեղի կունենա Սուրբ Թարգմանիչ Վարդապետներին նվիրված՝ հայ ժողովրդի ամենանվիրական եւ սիրված ազգային եկեղեցական տոներից մեկը:

Ավանդական արարողակարգով՝ առավոտյան ժամը 10:30-ին, Թբիլիսիի «Սուրբ էջմիածին» եկեղեցում կմատուցվի Սուրբ պատարագ՝ նվիրված Թարգմանչաց Վարդապետներին:

Հավարտ պատարագի, կայցելեն Հայ գրողների եւ հասարակական գործիչների Թբիլիսիի Խոջիվանքի պանթեոն, իսկ ժամը 14:00-ին «Հովհաննես Թումանյանի տանը» կանցկացվի «Թարգմանական գրականության նորագույն նմուշներ» խորագրով միջոցառում:

ԳՆԱՀԱՏՈՒՄ

«ԱՐԻՈՆԸ»՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԹԱՏԵՐԱՓԱՌԱՏՈՆԻ ԴԱՓՆԵԿԻՐ

Վրաստանի ռուսալեզու գրականագետների պուշկինյան ընկերությանն առընթեր, արդեն վեց տարի գործող Թբիլիսիի «Արիոն» ինքնագործ թատրոնը, Ճապոնիայի, Ֆրանսիայի եւ Ռուսաստանի Դաշնության թատերախմբերի հետ միասին, դարձավ Հայաստանի Ալավերդի եւ Նոյեմբերյան քաղաքներում անցկացված «Թատերական Լոռի» միջազգային փառատոնի դափնեկիր:

Իր գոյության վեց տարիների ընթացքում, հանդիսատեսը «Արիոնիի» ներկայացումները դիտել է ճանաչված ռեժիսորներ Լեւոն Ուզունյանի, Անատոլի Լոբովի, Թենգիզ Ավալիշվիլու բեմադրությամբ, թբիլիսյան ճանաչված գրականագետներ Միքայել Անանովի, Ալեքսանդր Մեյփարիանու, Իրինա Կեսկյուլլի պիեսների հիման վրա: Ներկայացումներին, ինքնագործ դերասանների հետ միասին, մասնակցել են Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան հայկական, Ալեքսանդր Գրիբոյեդովի անվան ռուսական, Նոդար Դումբաձեի անվան պատանի հանդիսատեսի երաժշտության եւ դրամայի թատրոնների դերասանները:

Անցյալ տարի «Արիոնը» արժանացավ Վրաստանում ՄԱԿ-ի ասոցիացիայի դրամաշնորհին եւ Ախալքալաքիում, Նինոծմինդայում, Ռուսթավիում եւ Թբիլիսիում կազմակերպեց Արտեմ Կիրակոզովի «Հուսանք» բեմադրությունը: Իսկ այս աշնանը՝ թատրոնը հրավիրվել էր «Թատերական Լոռի» փառատոնին:

Ինքնագործ դերասաններ Գարրի Ղալամքարովը, Ալեքսանդր Ասոյանը, Ժաննա Խաչատուրյանը, Իրինա Մարկարովան, Իրինա Կոպինաշվիլին, Մարիանա Կիրակոզովան ներկայացումը ցուցադրեցին Նոյեմբերյանի մշակույթի տանը՝ լեփ-լեցուն դահլիճում, որտեղ էլ «Արիոնի» ղեկավար Միքայել Այդինովին հանձնվեց պատվոգիրը:

ԳԻՈՐԳԻ ԳԵՑԱՉԵ

ՎԱԼԵՐԻ ԱՄԻՐԱԳՅԱՆ

57 տարեկան հասակում հանկարծամահ է եղել Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնի տաղանդավոր, բազմավաստակ, ըստ թատերագետների, Վրաստանի լավագույն երաժշտական ձեւավորողներից մեկը՝ Վալերի Ամիրագյանը:

Թբիլիսիի Վ.Սարաջիշվիլու անվան պետական Կոնսերվատորիան ավարտելուց հետո, 1989 թվականից մինչ օրս աշխատում էր Պ.Ադամյանի անվան պետհայդրամայի թատրոնում: Վերին աստիճանի արհեստավարժ նրա երաժշտական ձեւավորմամբ, թատրոնում բեմադրվել է հիսունից ավելի ներկայացում՝ դառնալով բեմադրությունների հաջողության գրավականներից մեկը...



Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնը եւ «Վրաստան» թերթի խմբագրությունը խորապես ցավում են թատրոնի երախտավորի մահվան կապակցությամբ եւ վշտակցություն հայտնում հանգուցյալի ընտանիքին:

ԽԱՉԲԱՌ



ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 7.Ուխտյալ: 9.Ոգեւորիչ: 10.Հանքային կամ օրգանական նյութերից առաջացած նստվածք ջրերի հատակին: 11.Շահավետ, օգտակար: 13.Տիրապետում, կառավարում: 16.Կաթնամթերք: 17.Քաղաք Ֆրանսիայում: 19.Հայկական գինի: 22.Քաղաք Ֆրանսիայի հարավ-արեւելքում՝ Միջերկրական ծովի ափին: 24.Ակվարիումային ձուկ: 25.Մեկը մյուսին: 27.Քաղաք Ռուսաստանում: 29.Վիճահարույց: 32.Թբիլիսիում գործող կինոթատրոն: 33.Մարզկենտրոն ՌԴ-ում: 35.Իտալացի կինոդերասանուհի Մոնիկա ...: 37.Հայկական հեռուստաալիք: 39.Բիշքեկում գտնվող ամերիկյան ավիաբազա (Ղրղզստան): 40.Սապոն: 43.Ամերիկացի դերասանուհի ... Գարդներ: 44.Հասարակական-քաղաքական որոշ տրամադրությունների արտահայտությունը հանդիսացող մասսայական երթ: 47.Վախից, երկյուղից (ժող.): 49.Համով, ախորժելի համ ունեցող: 50.Զգոն: 53.Լիճ պատմական Հայաստանում: 54.Հայտնի պարսիկ ծաղրանկարիչ ... Դիվանդարի: 55.Աղջիկը իր ծնողների մյուս երեխաների համար: 57.Բույր: 58.Նմանակ:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Մետաղ: 2.Գյուղ Արագածի շրջանում: 3.Կտոր, մաս: 4.Գյուղ Վրաստանում, Կասպիի մունիցիպալիտետում: 5.Եզդի ցեղապետ: 6.Հեթանոսական կրոնի սպասավոր՝ քահանա: 8.Գոյություն ունենալ: 12.Դիմում: 14.Սալոր: 15.Կրթություն, գիտելիք: 18.Սկեսրոջ «աղջիկը»: 19.Գետ Ռուսաստանում: 20.Լեւ Տոլստոյ, «Աննա ...»: 21.Երգիչ ... Մարտին: 23.Շնականություն, անամոթություն: 26.Ռումբ: 28.Չթից կարված: 29.Պարանոց: 30.Կղզի Ինդոնեզիայում: 31.Արեւելյան ծագումով հնագույն հարվածային երաժշտական գործիք: 34.Ալպիական: 36.Հիսուսը իսլամում: 38.Միապետի տիտղոս Մերձավոր եւ Միջին Արեւելքի երկրներում: 41.Գլխին մազ չունեցող: 42.Կիեւյան ...: 45.Խոշոր քաղաք Չինաստանում: 46.Մինչեւ կյանքի վերջը: 48.Բանգլադեշի մայրաքաղաքը: 51.Էտապ: 52.Խոշոր երգեհոն: 56.Լեհ գրող Հենրիկ Սենկեւիչի պատմավեպ՝ «... երթաս»:

Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Անարատ: 4.Թուզ: 6.Անի: 11.Սե: 12.Տրե: 13.Անափ: 14.Որդան: 15.Վիրք: 16.Մի: 17.Անօդ: 18.Նատո: 23.Լրագիր: 24.Ջեռուն: 25.Կարեն: 28.Գաղտնիք: 30.Հավաստի: 31.Ծոռ: 32.Բագարան: 35.Գոյական: 42.Նովա: 43.Իսահակ: 44.Գավաթ: 45.Քոչար: 49.Մեծապատիվ: 52.Լավա: 53.Մարկ: 54.Գարահիսար: 55.Տհաճ: 56.Ադամ:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 2.Նադալ: 3.Աստանա: 5.Ուրարտու: 6.Ազնիվ: 8.Թերի: 9.Ներդնել: 10.Մառնեուլ: 11.Սոմալի: 19.Վաժա: 20.Սիրտ: 21.Փարաջանով: 22.Սերտ: 26.Միսաք: 27.Տարոն: 29.Գոռ: 33.Աթար: 34.Անակ: 36.Կոչ: 37.Ավան: 38.Նար: 39.Միգելո: 40.Գավազան: 41.Սանահին: 46.Սենատ: 47.Տիրան: 48.Ռադա: 50.Սարդ: 51.Լկամ:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan.press@gmail.com

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445